

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՈՒՐԶԵՐԵՆ, ԹԱԹԱՐԵՐԵՆ,
ՂՉՉԱՂԵՐԵՆ, ԶՐԴԵՐԵՆ ԵՎ ՀՈՒՆԱՐԵՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

Շատ ժողովուրդներ և ազգեր կան, որոնք իրենց գրականությունը ստեղծել են միաժամանակ երկու լեզվով՝ սեփական ու օտար, և կամ է՝ օտար լեզուներով:

Օսմանյան պետության կողմից Հայաստանի նվաճումից հետո ավելի քան 400 տարի հայերն ապրել են թուրքական տիրապետության տակ: Մա տվորական հայատակություն չի եղել, այլ կրոնական մոլեռանդության մոլուցքով տարված ռազմա-ֆեոդալական իշխանության տևական ու անավար ճնշում մշակութային խոր անցյալ ունեցող մի ժողովրդի վրա: Թուրք տիրապետողները ոչ միայն կողոպտել են հայ ժողովրդի ստեղծած նյութական բարիքները, նրա ֆիզիկական աշխատանքի արդյունքը, այլև ամեն կերպ աշխատել են ոչնչացնել կամ յուրացնել նաև նրա մտավոր ստեղծագործության արժանիքները, ծուլել ու մահմեդականացնել հայատակ ժողովուրդներին: Հայատառ թուրքերեն գրականությունը ծնունդ է առել որպես ինքնապահպանման ու ուժացման դեմ պայքարի միջոց: Խորապես ազգային այս երևույթն իր ձեռագիր ու տպագիր զարգացման ժամանակաշրջանում վերաճել է մշակույթի մի այնպիսի հոգը, բազմաժանր ու ինքնուրույն ճյուղի, որը ոչ միայն արդարացրել է իր նախնական առաքելությունը, այլև վերաճել է ավելի լայն գործոնի՝ ծառայել ոչ միայն թուրքախոս ու նաև թուրքերենին տիրապետող հայերին, այլև Օսմանյան կայսրության մեջ ապրող այլ ազգերի ևս, իր մասն ունենալով այդ ժողովուրդների եվրոպականացման և լուսավորության զարգացման գործում:

Հարկ է նշել, որ ի թիվս հայերեն ու հայատառ թուրքերեն գրականության, գոյություն են ունեցել հայատառ դիշաղերեն, լատիներեն, արաբերեն, քրդերեն և շատ այլ հայատառ գրականություններ:

Պահպանված և մեզ հասած հայատառ հումարեն ձեռագրերը չափազանց փոքր թիվ են կազմում: Դրանք հիմնականում ԺԵ-ԺԹ դարերում Թիֆլիսում, Մեծփայ վանքում, Աստրախանում, Կ.Պոլսում և այլուր գրի առնված մատյաններում տեղ գտած աղոթքներ են, տաղեր, բառացանկեր, որոնց կից որպես կանոն եղել են դրանց այլալեզու տարբերակները¹: Այս ձեռագրերն ունեցել են կիրառական հստակ նշանակություն:

Հայատառ քրդերեն գրականությունը ստեղծվել է որոշակի նպա-

տակադրվածությամբ: Զանի որ այլընտրանք համարյա չկար, ապա քրդա-խոս ժողովուրդների համար ստեղծված գրականությունը հիմնականում եղել է հայատառ: Շնորհիվ հայ գրիչների, մեզ են հասել այս գրականության ձեռագիր և տպագիր նմուշներ⁵. որոնք տպագրվել են հայկական տպարաններում⁶, մասամբ հայ հեղինակներ ունեցել: Հայատառ քրդերեն ձեռագրերը աղոթքներ են, ժողովրդական բանահյուսության օրինակներ, ինչպես առակներ, հանելուկներ, ասացվածքներ, երգեր, նաև բառարաններ: Դրանք որոշակի ազգագրական արժեք են ներկայացնում: Հետաքրքրական է Ախալքալաքի Էշտիա գյուղում գրիչ, տաղերգու Մարգիս Զյուր-դօղլյանի 1869-81թթ. գրի առնված Տաղարանը⁷: Մասնագետների կարծիքով դա միջնադարյան հայտնի բուրդ փիլիսոփա բանաստեղծ Ֆադիե Տայրայի ստեղծագործություններն են: Կարծում ենք հետաքրքրություն են ներկայացնում 1680-1719 թթ. Բաղեշում գրի առնված ժողովածուի մեջ տեղ գտած քրդական «Տաղ Դ-ն է խանմանայ» երգերը, Ի դարի հայ-քրդերեն զրուցաբառարանը⁸:

Հայատառ քրդերեն տպագիր գրականության մի մասը կապվում է Օսմանյան կայսրության ժողովուրդների շրջանում ամերիկյան և եվրոպական տարբեր կազմակերպությունների միսիոներների գործունեության հետ: Այս շրջանում թարգմանվել ու տպագրվել են տարբեր լեզուներով Աստվածաշունչ, Ավետարաններ, դավանաբանական գրքեր, այդ թվում՝ հայատառ քրդերեն⁹: Հայատառ քրդերեն տպագիր գրականության մյուս մասն իրենից ներկայացնում է լուսավորական առաքելության արտահայտություն: Դրանք Սկրտիչ վարդապետ Տիգրանյանի, Պետրոս Ամիրխանյանի հեղինակած քրդերենի և հայերենի դասագրքերն են, այբբենաբաններ, բառարաններ: Այն ուղղված էր քրդերին գրաճանաչ դարձնելու նպատակին¹⁰:

Հայատառ թաթարերեն և հայատառ ղփչաղերեն գրականությունը հայ մշակույթի անբաժանելի մասն է կազմում և որոշակի պատմաբանասիրական արժեք ունի: Այն հայատառ թուրքերեն գրականության մի տարբերակն է և առաջացել է հավանաբար 14-15-րդ դարերում: Այս ձեռագրերը պատկանելի թիվ են կազմում և գտնվում են աշխարհի տարբեր հայկական ու մասնավոր ձեռագրատներում: Մեզ են հասել հիմնականում 16-րդ դարի ձեռագրեր, որոնք ստեղծվել են Արևմտյան Ուկրաինայի, Լեհաստանի հայկական գաղթավայրերում, որոնց մի մասը թրքախոս էր և ունեն հույժ ազգային բնույթ, ծառայել են համայնքի ամենօրյա կենցաղային, հոգևոր-ժիսական խնդիրներին: Դրանք քարոզգրքեր, աստվածաշնչային պատմություններ են, համայնքի համար որպես օրենսգիրք ծառայած դատաստանագրքեր (Մխիթար Գոշի Դատաստանագիրքն է՝ 10 գլուխ թարգմանությամբ), եկեղեցական, արարողակարգային ձեռագրեր, աղոթքներ, ժամագրքեր, սաղմոսագրքեր, վարք սրբոց, համայնքի կանոնադրություններ, եկեղեցական հաշվամաման, ամուսնական դաշնագրերի ու ծնունդի մատյաններ, պարգևագրեր, անդորրագրքեր, կսիագրքեր, հաշվեմատյաններ, պատմութիւններ (Խիկարի պատմությունը և այլն), տաղեր, բառգրքեր և

այլն⁸:

Հայաստանում դիչաղերեն ձեռագրերը⁹ պարունակում են բառարաններ, ժամագրքեր ու աղոթագրքեր, դատաստանագրքեր, բժշկարաններ: Չափազանց արժեքավոր են դիչաղերենի եզակի քերականությունները, բառարանները¹⁰: Դրանք իրենց համագործ չունեն թյուրքական ժողովուրդների մոտ:

Երբեմն հայատառ թուրքերեն, հայատառ թաթարերեն և հայատառ դիչաղերեն բաժանումները հարաբերական են՝ կախված ձեռագրացուցակների կազմողների հայեցողությունից. ձեռագրերի ստեղծման ժամանակային ու լեզվական նրբություններին տիրապետելուց: Հետագայում այս ձեռագրերի մի մասը տպագրվել է հիմնականում Լվովում¹¹:

Գալով հայատառ թուրքերեն գրականությանը, ապա նրան ևս հատուկ է շեշտված հայ ազգային նկարագիրը: Հայատառ թուրքերեն գրականությունը չի համարվում հայ ժողովրդի հիմնական, առավել ևս՝ հայ ժողովրդի մտավոր զարգացման գրական միակ արտահայտությունը: Հայատառ թուրքերենը ստեղծվել է հայերի կողմից որպես հաղորդակցության միջոց ոչ միայն հայերեն չինացողների, այլ նաև մասամբ հայերենին տիրապետողների համար: Հայատառ թուրքերեն գրականության սկզբնավորումն ու զարգացումն ընթացել է բուն հայ գրականությանը զուգահեռ և երբեք պայմանավորված չի եղել հայ գրականության վերելքով կամ վայրէջքով: Այն թելադրված էր միայն Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակով: Հայատառ թուրքերեն գրականությունն ունի սոցիալ-քաղաքական խոր արմատներ: Հայատառ թուրքերեն գրականությունը, բնականաբար, թե՛ քանական և թե՛ որակական առումներով զիջում է բուն հայ գրականությանը և կազմում ինքնուրույն արտահայտչաձև գտած նրա մի անբաժանելի մասը: Հայ ժողովրդի արևմտահայ հատվածը դարեր շարունակ գոյատևելով Օսմանյան կայսրության տիրապետության տակ, անընդհատ գտնվել է բռնի ուժացման քաղաքականության դեմ հանդիման, որը եթե լիակատար հաջողությամբ չի պակվել. բայց և անհետևանք չի անցել: Ջարդերից ու հետապնդումներից, հարկերից ու մանկահավաքներից հիմնականում ազատվել են այն մարդիկ, որոնք փոխել են, երբեմն միայն առերես, իրենց ազգությունն ու կրոնը: Հարյուրավոր հայկական գյուղեր, որոնք անցյալում ունեցել են իրենց վանքերն ու եկեղեցիները, աստիճանաբար ամայացել են, և 19-րդ դարի կեսերին այդ վայրերում քրիստոնյա հայախոս հայերի թիվը խիստ նվազել էր:

Հայատառ թուրքերեն գրականությունն անցել է զարգացման երկու շրջան՝ ձեռագրական և տպագիր: Ձեռագրական շրջանն ընդգրկել է մոտ 600 տարի (14-19- դդ.): Տպագիր շրջանը գոյատևել է մոտ 250 տարի: Այս շրջաններից յուրաքանչյուրն իր առանձնահատկություններն է ունեցել.

Հայատառ թուրքերեն ձեռագրական շրջանն ունեցել է հարուստ բովանդակություն և ընդգրկումների լայն շրջանակ: Այն ներառել է աշուղական գրականության հսկա մի հատված¹², ազգագրական բազմազան ու բազմաժանր գրականություն, Աստվածաշունչ, Ավետարաններ, կրոնադա-

վանաբանական, բարոյախոսական գործեր, քարոզներ, վարքագրական երկեր ու մարտիրոսությունների պատմություններ, ինչպես նաև քիմիային. բժշկությանը, քվաբանությանը, աստղագիտությանը, անասնաբուծությանը վերաբերող գիտական ձեռագրեր, գեղարվեստական, պատմական ինքնուրույն ու թարգմանական գործեր և այլն¹³:

Ի տարբերություն հայատառ թուրքերեն ձեռագրական շրջանի. հայատառ թուրքերեն տպագիր գրքի շրջանակները թեմատիկ առումով շատ ավելի ընդարձակ են: Գոյության առաջին հարյուրամյակում, քիչ բացառությամբ, հիմնականում ներկայացված են եղել կրոնա-դավանաբանական, բարոյախոսական երկեր: 1727-1840-ական թթ., ավելի քան մի ողջ հարյուրամյակ, հայատառ թուրքերեն գրականությունը հիմնականում ծառայել է կաթոլիկ (ավելի ուշ՝ նաև ամերիկյան բողոքական) միսիոներներին՝ հայերի շրջանում կաթոլիկության և բողոքականության տարածման համար: Պատասխան կրոնադավանաբանական գրականություն է ստեղծվում հայ եկեղեցու հայրերի կողմից, ի պաշտպանություն հայերի ավանդական կրոնին հավատարիմ մնալու հայապահպան քաղաքականության:

19-րդ դ. երկրորդ կեսից, այս բովանդակությամբ զուգահեռ, սկսվում է հայատառ թուրքերեն տպագիր գրականության զարգացման մի նոր շրջան: Այս ժամանակահատվածի համար բնորոշ է ձգտումը աշխարհիկ թեմաներին: 1850-1870-ական թթ., հայ քաղաքական կյանքի զարգացման համար համեմատաբար բարենպաստ տարիներին, հայատառ թուրքերեն գրականությունը մեծապես նպաստել է հայ ժողովրդի թրքախոս հատվածի հոգևոր վերելքին, նրա ազգային-ազատագրական ոգու վերածննդին և ընդհանուր առմամբ Օսմանյան կայսրությունում հասարակական մտքի զարթոնքին: Այս շրջանի հրատարակություններում մոտ տասը ժանրային ձևեր ենք տարբերակում: Այն է՝ գեղարվեստական գրականություն (ինքնուրույն և թարգմանական), պատմական, պատմա կրոնական աշխատություններ, լուսավորական գրականություն, հրապարակախոսություն, փիլիսոփայական տրակտատներ, գիտական, գիտա-հանրամատչելի գրքեր, դասագրքեր, բառարաններ, օրենսգրքեր, իրավագիտական ակտեր, դավանաբանական հրատարակություններ, կենցաղային գրքեր, հրատարակություններ երեխաների համար և այլն: Միայն հայատառ թուրքերեն պիեսների թիվն անցնում է 500-ից¹⁴: Դրանց մի չնչին մասն է միայն տպագրվել: Նույնիսկ համիդյան բռնակալության դաժան տարիներին, երբ արգելված էր ազգայինը, հայկականը շեշտող ամեն մի բան, հայատառ թուրքերեն գրականությունը շարունակեց մույն հաջողությամբ իր զարգացումը, այս անգամ առատորեն թարգմանելով եվրոպական ռոման-ֆելիե-տոնի արքաների հազարավոր էջեր կազմող գրքերը, որոնց լուսավորական, ճանաչողական ազդեցությունն անհնարին է անտեսել: Հայ թատերախմբերը, որոնք իրականացնում էին նաև թուրքերեն ներկայացումներ՝ առատորեն օգտագործում էին հայատառ թուրքերենը: Թուրքերեն ներկայացումների տեքստերը, դերերը՝ հայատառ թուրքերեն էին: Հայկական թատրոնների համար թուրք լուսավորիչների կողմից գրված կամ թարգմանված,

ադապտացված պիեսները եղել են հայատառ թուրքերենով: Դրանք մեծ հաջողությամբ օգտագործվել են համրապետական շրջանի թուրք թատերախմբերի կողմից իրենց գործունեության սկզբնական շրջանում:

Իր գոյության ավելի քան 250 տարիների ընթացքում հայատառ թուրքերենով տպագրված գրքերի թիվն անցնում է 2000-ից: Դրանք տպագրվել են աշխարհի մոտ 50 քաղաքների 200-ից ավելի տպարաններում 1727-1961թթ. ժամանակաշրջանում: Հայատառ թուրքերեն մամուլն իր 150 տարվա գոյության ընթացքում մոտ 120 անուն պարբերականներ է հաշվում¹⁵:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նվազել էր հայատառ թուրքերեն կարդացողների թիվը՝ հետևաբար նաև տպագրվող գրքերի. մամուլի թիվը: Հայատառ թուրքերեն գրականությունը վայրէջք է ապրել թրքախոս հայերի ավագ սերնդի անհետացման և, ընդհանրապես՝ եղեռնին զոհ գնացած հարյուր հազարավոր թրքախոս հայերի անհետացման պատճառով: Հայատառ թուրքերեն գրահրատարակչությունը Թուրքիայում մեծ արագությամբ անկում ապրեց: Հայատառ թուրքերեն գրականությունն իր առաքելությունը կատարել էր: Հայերի մեծ մասը հայախոս էին դարձել և կարդում էին հայերեն: Մյուս կողմից՝ եղեռնին զոհ էին գնացել ոչ միայն հայատառ թուրքերեն ընթերցողները, այլև այն ստեղծող մտավորականները, հասարակական գործիչները: Եղեռնին զոհ գնաց մի այնպիսի հզոր մշակութային արժեք, ինչպիսին էր նոր ժամանակներում մույն Օսմանյան կայսրության ու նրա ժողովուրդների և առաջին հերթին՝ թուրքերի բազմակողմանի զարգացմանը մեծագույն ծառայություններ մատուցած հայատառ թուրքերեն գրականությունը:

Աշխարհի տարբեր անկյուններում մագապուրծ փրկված հայերը, որոնց համար թուրքերենը մնում էր հաղորդակցության միջոց, դեռ երկար տարիներ ստիպված էին օգտագործել այս գրականությունը, կարդալ հայատառ թուրքերեն պարբերականներ, կրոնական-քարոյախոսական հրատարակություններ և այլն:

20-րդ դարում Հայատառ թուրքերենը ժամանակավորեալ (անախրոնիզմ) էր դարձել:

HASMIK STEPANYAN

THE LITERATURE ON TURKISH, TATAR, KIPCHAK, KURDISH AND GREEK LANGUAGES IN ARMENIAN CHARACTERS

There is very little number of Greek manuscripts with Armenian alphabet. They are prayers, songs, and word-lists generally of the 15-19th centuries that had only practical meaning.

The Kurdish literature in Armenian characters has been created with an aim to make Kurds literate. There are prayers, dictionaries, songs and examples from folklore that represent ethnographic importance. In the age of publishing Armenian authors developed textbooks, alphabets and dictionaries of Kurdish and Armenian languages. The Bible, the Gospels, theological books were translated and published in the period of activities of various American and European missionaries.

The Tatar and Kipchak literature with Armenian alphabet has some historical and philological value. It is aversion of Turkish literature in Armenian characters and has been developed in 13-14th centuries.

Turkish literature in Armenian characters had social-political roots. In the period of more than 250 years (1727-1961) of its existence more than 2000 books had been published in the more than 200 publishing houses of about 50 cities in the world.

Turkish press in Armenian characters has had about 120 periodicals during 150 years of its existence.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* Հոդվածի ֆրանսերեն տարբերակը լույս է տեսել «Ֆրանսիայում Հայաստանի տարվա» շրջանակում Մարսել քաղաքում Հայոց գրին ու գրչությունը նվիրված ցուցահանդեսի կապակցությամբ իրականացված հրատարակության մեջ: Տես "Arménie. La magie de l'écrit", sous la direction de Claude Mutaftian. "Musées de Marseille", "SOMOGY éditions D'ART, 2007, էջ 337-343:

1. Հայատառ հունարեն աղոթքներ և տաղեր կան Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) 631, 4618, 5954, 7117, 7316, 7716, 8728 ձեռագրերում:
2. Դրանցից երկուսը՝ 7117 և 7316 ձեռագրերում «Մուրք Աստուած» աղոթքն է՝ հայատառ հունարեն, հայատառ քրդերեն, հայատառ ասորերեն, հայատառ վրացերեն, հայատառ պարսկերեն, հայատառ արաբերեն, հայատառ դիշաղերեն: Հայատառ հունարենով կա «Հայր մեր, Ողջոյն բեզ» աղոթքի մի քանի օրինակ: Կես էջանոց բառացանկ տես Վիեննայի Մխիթարյան Մատենադ., ձեռ. 876 (ԺԹդ.):
3. Հայատառ քրդերեն են պարունակում ՄՄ 737, 771, 4618, 5066, 7117, 8049, 10036 ձեռագրերը:
4. Մեզ հայտնի հայատառ քրդերեն տպագիր գրքերի թիվն անցնում է տասից:
5. ՄՄ, ձեռ. 1036:
6. ՄՄ, ձեռ. 737:
7. Հայատառ քրդերենով Կ.Պոլսում 1850, 1861, 1857, 1872, 1891, 1911 թվականներին լույս են տեսել Նոր կտակարան, Ավետարաններ:
8. Դրանք տպագրվել են 1861, 1866, 1868, 1910 թվականներին Կ.Պոլսում: 1942թ. Հալեպում, հայկական Շիզմեճյան տպարանում տպագրվել են հոգևոր երգարաններ Դազար Տեր-Ղազարյանի թարգմանությամբ: 1949թ. Բեյրութում տպագրվել է Հակոբ Մոմճյանի քրդերենի դասագիրքը՝ քերականությամբ, բառարանով համդերով:
9. Հայատառ թաթարերեն ձեռագրեր տես՝ Վիեննայի Կալսերական մատենադարանի ձեռ. 13 (1580թ.) և ձեռ. 3 (1638թ.): Տես նաև՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության

ծեռ. 468 (1575թ.), 559 (1583թ.). 446 (1608թ.), ձեռ. 525 (1618թ.), ձեռ. 447 (1643թ.), 479 (1660թ.), 480 (1661թ.), 536 (ԺԶ), ձեռ. 1300(ԺԸ), 1609(ԺԸ) և այլն: Տես նաև՝ ՄԼԴ, ձեռ. 1731. 9789:

10. Կամհենց-Պոդոլսկում և մյուս մշակութային հայկական կենտրոններում գրի առնված և տպագրված հայատառ դիպաղներնով (հին թաթարերեն) մեծ թվով գրականություն է պահվում Ուկրաինայի, Լեհաստանի արխիվային ֆոնդերում: Հայատառ դիպաղներն ձեռագրեր տես նաև՝ Փարիզի Ազգային գրադարան, ձեռ.176 (1568թ. Լվով) «Դատաստանագիրք Լեոպոլտի Հայոց» և ձեռ. 194, «Ժողովածոյ» (Ուկրաինա, ԺՆԴ, կեսեր):
11. ՄՄ, ձեռ. 3522, «Քերականութիւն դիւադ լեզուի» (1634թ. Լվով, 353 թերթ), ձեռ. 3883, «Բառք քերականականը» (ԺԶդ., 383թերթ), ձեռ. 3521 «Թուրք առ Դիտսկորոս» (1609թ. 220 թերթ) և այլն:
12. 1619թ. Լվովում տպագրվել է «Աղօթք հասարակաց քրիստոնէից» գիրքը Հովհ. Քարմատանեանցի ապարանում: Գտնվում է Լեյդենի համալսարանի գրադարանում:
13. Հայատառ թուրքերեն ձեռագրերում ամբարված են նաև Արևելքի բանահյուսության, աշուղական ստեղծագործությունները, նրանց եղանակները, ժանրային բոլոր տեսակներով, հեղինակների մեծ անվանացանկով, եվրոպական ու եսայական մոտագրությամբ: Այս մասին տես՝ Ցամախկ Ստեփանեան, Հայատառ թուրքերեն գրքերի և Հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտութիւն, Ստամբուլ, «Թուրքուազ» հրատ., 2005, 652 էջ:
15. Տես ամռ, էջ 415-425:
16. Տես ամռ, էջ 553-652: